ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Թիֆլիսում մարտ ամսից սկսել է հրատարակուել մի նոր ռուսերէն շաբաթաթերթ „Кавказскій край“ վերնագրով խմբագրութեամբ պ. Բ. Ս. Էսաձէի։ Առաջին համարում տեղաւորուած առաջնորդողում խմբագրութիւնը բաղդաւոր է համարում իւր թերթը, որ երևան է գալիս հասարակական կեանքի վերին աստիճանի հետաքրքրական ժամանակ և խոստանում է լինել արձագանք ներկայումս բոլոր Ռուսիային և մասնաւորապէս Կովկասին յուզող խնդիրների։ Թերթը խոստանում է լինել ազգային համերաշխութեան գաղափարի ջերմ պաշտպան Կովկասում։

Թող, ասում է նոր լրագիրը՝ քարթալինցին և կախեթցին ապրեն իրանց շքեղ հովիտներում, խեվսուր-խաչակիրը պահպանէ իւր խաչը իւր մայրենի և վայրենի ժայռերի մէջ, հայը մշակի իւր հողը և բաժակը սրբազան Արարատի շուրջը, գուրիացին, մինգրելը և աբխազը մշակէ թէյ ու ծխախոտ Պոնտոսի ափերում և կովկասցի-թուրքը պարապի երկրագործութեամբ իւր սիրելի հովիտներում և լեռներում։ Եւ թող մենք, բոլոր ազգաբնակութիւններս Կովկասի, ապրենք եղբայրաբար, անկեղծ աշխատելով մեր ծննդավայրի շրջաններում ոտնձգութիւն չանելով ուրիշների ծննդավայրի վերաբերմամբ։ Եւ այն ժամանակ կըտիրէ խաղաղութիւն և անդորրութիւն, կըսկսուի համերաշխ գործունէութիւն, հիմնուած դէպի միմեանց ունեցած հաւատի, լիակատար համերաշխութեան և անկեղծութեան վրայ...

Գեղեցիկ խօսքեր, որոնց ծափահարում ենք անկեղծ հոգով։ Ապագան ցոյց կըտայ, թէ նոր թերթը որչափ կըկարողանայ և կըկամենայ ծառայել իւր ծրագրած գաղափարին։ Միայն կըցանկայինք նոյն իսկ թերթի սեպհական շահերի համար, որ յետագայ համարները այնպէս միակողմանի չըկազմուէին, ինչպէս մեր ձեռքի տակ գտնուող առաջին համարը։ Թերթը կրում է «Կովկասեան երկիր» անունը, այն ինչ՝ այս համարում չըկայ ոչ

մի յօդուած ոչ հայերի և ոչ Թուրքերի կեանքից. և այն ամբողջապէս նուիրուած է Աբխազների, Գուրիացիների և Վրացիների ներկայ վիճակին։ Վրաստանը, Աբխազիան և Գուրիան միասին վերցրած կազմում են Կովկասի մի երրորդական մասը և Թերթը կովկասեան համարուելով պէտք է այս բանը աչքի առջև ունենայ և ոչ ցանկալի միակողմանիութիւնից իրան հեռու պահի։ Բացի դրանից, նոր Թերթի առաջին համարում «Իվերիա» վրաց լրագրից արտատպուած է հայերի դէմ ուղղուած և մի քիչ սպառնողական մի յօդուած մի ինչոր անանուն դէպքի առիթով, որ տեղի ունեցաւ Թիֆլիսի Քաղաքային խորհրդի գործունէութեան մէջ։ Թէ ինչու է այս յօդուածը, որ «Իվերիան» գրել է բոլշէի ազդեցութեամբ, նոր ռուս Թերթը ապարդէզ հանում նորից, չը գիտենք։ Գիտենք, որ եթէ Թերթը իրաւ ուզում է համերաշխութեան գաղափարին ծառայել, այս տեսակ յօդուածներով արդի ծառայութիւն միայն ցոյց կը տայ իւր ծրագրած համակրելի սկզբունքին։ Պէտք է անկեղծ լինել և որքան նոր Թերթը անկեղծ լինի, այնքան աւելի կը յարգուի նրա խօսքը։

Թերթը, ըստ երևոյթին, լինելու է պատկերազարդ։ Առաջին համարում տպուած նկարները բովանդակութեան կողմից շատ հետաքրքրական են. բայց լաւ չեն տպուած։ Այս արդէն Կովկասեան պատկերազարդ Թերթերի ճակատագիրն է։ Միանգամայն անախորժ տպաւորութիւն գործեց մեզ վրայ նկարիչ Օսկար Շլինգի ծաղրանկարը, որ տպուած է Թերթի վերջին երեսում։ Ծաղրել այսպէս անվայել կերպով հասարակութեան ներկայացուցիչներին ի մեծ ուրախութիւն մի ինչ որ կնոջ, որ այնպէս յանդգնաբար վիրաւորեց Քաղաքային խորհրդարանի իրաւունքները—կը նշանակէ հետևել Վելիչկոյի ուղղութեանը։

Ցանկալով այս տեսակ անվայել սխալներից հեռու մնալ, մաղթում ենք, որ մեր նոր եղբայրակիցը ունենայ յաջողութիւն իւր ծրագրին անկեղծ ծառայելու մէջ և արժանանայ համահաւասար բոլոր ընթերցողների համակրանքին առանց ազգերի խտրութեան։